ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ

«12» փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-05/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 27.01.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 27.01.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 27.07.2015թ. Ընկերությունը, հայտ ներկայացնելով «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված դպրոցի ճաշարանի վերակառուցման աշխատանքների

ձեռքբերման նպատակով կազմակերված ԱՄԱՔ2Դ-ՊԸԱՇՁԲ-15/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին և ճանաչվել է հաղթող:

31.07.2015թ. Վոլոդյա Մարտիրոսյանի կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ահազանգ է ներկայացվել, որից հետո մինչև ահազանգով նշված փաստերի իսկության ստուգման ավարտը պայմանագրի կնքումը հետաձգվել է:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հարցումներ կատարելուց և ահազանգով հայտնած տեղեկությունները ստուգելուց հետո գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնելու հիմքերի բացակայության հիմքով ահազանգը համարվել է առարկայազուրկ և ընթացք չի տրվել:

Նշվածի մասին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Թունյանի կողմից գրավոր կերպով 2015թ. հոկտեմբեր ամսին տեղեկացվել է նաև Պատվիրատուն:

Տեսնելով, որ Պատվիրատուի կողմից դրսևորվում է անգործություն և պայմանագիր կնքելու համար որևէ գործողություն չի ձեռնարկվում, Ընկերությունը մի քանի անգամ հեռախոսազրույց է ունեցել դպրոցի տնօրենի հետ, սակայն վերջինս տարբեր պատճառաբանություններով խուսափել է պայամանգիր կնքելուն ուղղված օրենքով սահմանված միջոցներ ձեռնարկելուց: Մասնավորապես, Պատվիրատուի ներկայացուցիչը նշել է, որ բողոքի պատասխանի ուշանալու պատճառով իրենք անցել են չոր սննդակարգի և ճաշարանի վերակառուցման անհրաժեշտությունը վերացել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը սահմանում է.

1. Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

Ըստ Ընկերության՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ Պատվիրատուի ներկայացրած բանավոր հիմնավորումը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետին:

ՀՀ Կառավարության 10 փետրվարի 2011 թվականի Գնումների գործընթացի կազմակերպման մասին N 168-Ն որոշման 62-րդ կետով սահմանվում է.

Եթե գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում, ապա այդ ընթացակարգը չկայացած է հայտարարվում, և օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է գնման նոր ընթացակարգ: Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա պետության կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա՝ բացառությամբ ավիասպասարկման ծառայությունների գնման դեպքի:

Երբ Ընկերությունը Պատվիրատուին հայտնել է, որ նշված հիմքով ընթացակարգը չկայացած հայտարարելու իրավունք ինքը չունի, եթե չկա ՀՀ կառավարության համապատասխան որոշում, վերջինս 05.11.2015թ. (բողոքի պատասխանը ստանալուց գրեթե մեկ ամիս անց) «www.gnumner.am» կայքում տեղադրել է հայտարարություն, որում նշվում է, որ ընթացակարգը չկայացված է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, այսինքն պայմանագիր չի կնքվել, չնայած հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն բաժնում նշել է. «Բողոքարկման պատասխանի ուշացման և հայտարարության մեջ նշված ժամկետների խախտման պատճառով «ԱՄԱՔՀԴ-ՊԸԾԾԲ 15/1» ծածկագրով գնումը նպատակահարմար չենք գտնում իրականացնել և պայմանագիր կնքել»: Նշվածը չի տեղավորվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի՝ պայմանագիր չի կնքվում, հիմքի շրջանակներում: Օրենսդիրը հստակ հիմքեր է նախատեսել և նշված հիմքերում բացակայում է Պատվիրատուի կողմից ոչ նպատակահարմար լինելը: Այլապես, ցանկացած Պատվիրատու, երբ ցանկանա, երբ իր նախընտրած մասնակիցը չհաղթի մրցույթում, ելնելով աննպատակահարմարությունից, կարող է ավարտված ընթացակարգը չկայացած համարել ու խուսափել պայմանագիր կնքելուց, ինչը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակներից ու սկզբունքներից: Այն է.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Նշված դեպքում Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված սկզբունքները, չղեկավարվելով միասնական կանոներով, խտրական և կամայական վերաբերմունք է դրսևորել՝ Պայմանագիր չկնքելով մրցույթում հաղթած ընկերության հետ:

Նույն ահազանգով բողոք է ներկայացվել նաև «ՀՀԱՄԱՖ-ԲԸԱՇՁԲ-15/13» ծածկագրով բաց ընթացակարգի վերաբերյալ (Պատվիրատու Արարատի քաղաքապետարան) և ստուգումների արդյունքների մասին միևնույն գրությամբ հայտվել երկու Պատվիրատուներին էլ, սակայն առաջին դեպքում Արարատի քաղաքապետարանի կողմից բողոքի պատասխանը ստանալուց հետո անմիջապես միջոցներ են ձեռնարկվել պայմանագիր կնքելու վերաբերյալ, իսկ Արարատ քաղաքի Պ.Սևակի անվան թիվ 2 դպրոցի տնօրինության կողմից դրսևորվել է անգործություն և, կամայականությամբ առաջնորդվելով, պայամանագիր չի կնքվել:

Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ հայտարարությունը «www.gnumner.am» կայքում տեղադրելուց հետո 25.11.2015թ. Ընկերությունը գրավոր դիմել է Պատվիրատուին՝ պարզաբանում ստանալու համար, սակայն վերջինս մինչ օրս ոչ գրավոր և ոչ էլ բանավոր ոչ մի պատասխան չի ներկայացրել:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն չի ունեցել որևէ իրավական հիմք ընթացակարգը չկայացած հայտարարելու համար: Ընթացակարգը չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և Կառավարության N 168-Ն առ 10 փետրվարի 2011 թվականի որոշմամբ սահմանված կարգի դրույթների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ, 48-րդ հոդվածների դրույթներով՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել Պատվիրատուի կողմից ընթացակարգը չկայացված հայտարարելու (պայմանագիր չկնքելու) մասին համապատասխան որոշումը (արձանագրությունը) և պարտավորեցնել Պատվիրատուին կնքելու համապատասխան պայմանագիր:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 03.02.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-05/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչը նիստին ներկայացել էր ոչ պատշաճ լիազորագրով, ինչի պատճառով, ինչպես նաև Պատվիրատուի բողոքի պատասխանը ստանալու համար ԳԲԽ-05/16 Բողոքը քննող հանձնաժողովը որոշել է նիստը հետաձգել:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 20.02.2016թ. ժամը 10:00-ին ԳԲԽ-05/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած հանձնաժողովի նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.02.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ճաշարանի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԱՄԱՔՀԴ-ՊԸԱՇՁԲ-15/1 ծածկագրով մրցույթին ճանաչվել է հաղթող, սակայն պայմանագիր չի կնքվել, քանի որ 2 օր հետո «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ բողոք է ներկայացվել այն մասին, որ մրցույթին մասնակցելու ժամանակ վերոհիշյալ կազմակերպությունը իրավունք չի ունեցել մասնակցելու՝ ՍՊԸ-ի գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու պատճառով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի ժ/պ Հ.Թունյանին 19.08.2015 թ.-ին ուղղել են նամակ, որին ի պատասխան ստացել են, որ չեն կարող պայմանագիր

կնքել, քանի դեռ ֆինանսների նախարարությունից համապատասխան որոշում չեն ստացել: Բազմիցս խոսել են գնումների աջակցման կենտրոնի համապատասխան աշխատակցի հետ և լսել նույն պատասխանը: Բողոքարկման պատասխանը 20-օրյա ժամկետում ստանալու փոխարեն՝ պատասխան ստացել են 26.10.2015 թ.-ին:

Ուստի «Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն պայմանագիր չի կնքվել:

«Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 03.02.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-05/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած հանձնաժողովի նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 12.02.2016թ. ժամը 10:00-ին ԳԲԽ-05/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Զ.Հովհաննիսյանն առարկել է բողոքի դեմ և հայտնել, որ Ընկերության հետ պայմանագիր չի կնքվել, քանի որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին բողոք է ներկայացվել այն մասին, որ մրցույթին մասնակցելու ժամանակ Ընկերության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է եղել: «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 19.08.2015թ. ուղղել է նամակ, որին պատասխանել են, որ չեն կարող պայմանագիր կնքել, քանի դեռ ՀՀ ֆինանսների նախարարությունից համապատասխան որոշում չի ստացվել: Բողոքարկման պատասխանը ստացել են 26.10.2015թ. և նոր միայն ընթացակարգը չկայացած են հայտարարել:

Զ.Հովհաննիսյանը հայտնել է նաև, որ նշված աշխատանքների կատարման համար իրենք պատրաստվում են նոր մրցույթ հայտարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե Ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի որ կետի հիմքով են չկայացած հայտարարել, Պատվիրատուի ներկայացուցիչը պարզաբանել է, որ Ընթացակարգը չկայացած են հայտարարել Օրենքի 35-րդ հոդվածի բոլոր կետերով, քանի որ այդ ժամանակ արդեն աշխատանքների ձեռքբերումը աննպատակահարմար են գտել:

3. ԳԲԽ-05/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-05/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզի «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար դպրոցի ճաշարանի վերակառուցման և վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՄԱՔՁԴ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

2. Վոլոդյա Մարտիրոսյանը 31.07.2015թ. ժամը 14:55-ին ահազանգ է ներկայացրել Կենտրոնի թեժ գծին և հայտնել, որ «ԱՄԱՔՁԴ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն, սակայն www.taxservice.am կայքի համաձայն «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գործունեությունը ժամանակավոր դադարեցված է:

3. Կենտրոնը ***01.10.2015թ.*** թիվ 01/04.1/2584-15 գրությամբ «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին հայտնել է, որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 30.09.2015թ. թիվ 1/73-1/28363-15 գրությամբ Կենտրոնին ներկայացրած ՀՀ ֆինանսների նախարարության Վանաձորի տարածքային հարկային տեսչության 25.09.2015թ. թիվ 65-4/[935732]-15 գրության՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գործունեությունը 27.07.2015թ. դրությամբ (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) ժամանակավոր դադարեցված չի եղել:

4. «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ***2015 թվականի նոյեմբերի 5-ին*** հրապարակված հայտարարության համաձայն՝ «ԱՄԱՔՁԴ-ՊԸԾԾԲ 15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով, իսկ որպես հիմնավորում նշվել է. «Բողոքարկման պատասխանի ուշացման և հայտարարության մեջ նշված ժամկետների խախտման պատճառով «ԱՄԱՔՁԴ-ՊԸԾԾԲ 15/1» ծածկագրով գնումը նպատակահարմար չենք գտնում իրականացնել և պայմանագիր կնքել»:

4. ԳԲԽ-05/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 27.01.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը, «ԱՄԱՔ2Դ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

«1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. (...) »

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:»

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:»:

Ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Կենտրոնը 01.10.2015թ. թիվ 01/04.1/2584-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գործունեությունը 27.07.2015թ. դրությամբ (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) ժամանակավոր դադարեցված չի եղել, իսկ Պատվիրատուն 05.11.2015թ. նոր միայն www.gnumner.am պաշտոնական կայքէջում հայտարարություն է տեղադրել, համաձայն որի «ԱՄԱՔՁԴ-ՊԸԾԾԲ 15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած է հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով (պայմանագիր չկնքվելու հիմքով), սակայն որպես հիմնավորում նշել է. «Բողոքարկման պատասխանի ուշացման և հայտարարության մեջ նշված ժամկետների խախտման պատճառով ***«ԱՄԱՔՁԴ-ՊԸԾԾԲ 15/1» ծածկագրով գնումը նպատակահարմար չենք գտնում իրականացնել և պայմանագիր կնքել»:***

Կենտրոնը գտնում է, որ պայմանագիր կնքելու աննպատակահարմարության հիմքով Ընթացակարգը չկայացած հայտարարելը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից մատնանշված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված հիմքին (պայմանագիր չկնքվելուն), քանի որ Պատվիրատուի կողմից ոչ նպատակահարմար գտնելը չի կարող հանդիսանալ պայմանագիր չկնքելու օբյեկտիվ պատճառ: Կենտրոնի կարծիքով՝ Պատվիրատուն, մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի հետ չցանկանալով պայմանագիր կնքել և Ընթացակարգը չկայացած հայտարարելով, չի ղեկավարվել գնման գործընթացի միասնական կանոններով, խտրական և կամայական վերաբերմունք է դրսևորել՝ խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ Ընկերության՝ «ԱՄԱՔՁԴ-ՊԸԱԾՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2015թ. պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը ենթակա է բավարարման:

Անդրադառնալով բողոքի՝ Պատվիրատուին «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջին՝ Կենտրոնն արձանագրում է, որ

գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ, ուստի, գտնում ենք, որ այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պատճառաբանություններին, որ Պատվիրատուն ցանկացել է մրցույթում հաղթող ճանաչված Ընկերության հետ պայմանագիր կնքել, սակայն չի կնքել, քանի որ Կենտրոնին բողոք է ներկայացվել, որով կասեցրվել է պայմանագրի կնքման ընթացակարգը, ապա Կենտրոնը փաստում է, որ վերը նշված հարցի կապակցությամբ 31.07.2015թ. ոչ թե բողոք, այլ ահազանգ է ներկայացվել Կենտրոնին, ինչը չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը: Ավելին՝ Կենտրոնը 01.10.2015թ. թիվ 01/04.1/2584-15 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի գործունեությունը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ժամանակավոր դադարեցված չի եղել, ինչից հետո էլ սակայն Պատվիրատուի կողմից դրսևորվել է անգործություն և պայմանագիր չի կնքվել, իսկ ***05.11.2015թ.*** Ընթացակարգը չկայացած է հայտարարվել:

Կենտրոնն արձանագրում է նաև, որ Պատվիրատուի կողմից նշված Կենտրոնի կողմից պատասխան ստանալու 20-օրյա ժամկետը վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնով նախատեսված գնումների գործընթացի բողոքարկմանը, որտեղ ստացված գրավոր բողոքով որոշման կայացման համար սահմանված է 20-օրյա ժամկետ, մինչդեռ գնումների վերաբերյալ ստացված ահազանգերի քննարկման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 19-րդ գլխով, որում նման ժամկետ սահմանված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 27.01.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. Դադարեցնել «ԱՄԱՔՀԴ-ՊԸԱՇՁԲ-15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.11.2015թ. ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

2. Պատվիրատուին «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-05/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Դավթյան